
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔ

Հարությունյան Հերբերտ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2025.19օր-04

Համառոտագիր: Սույն հետազոտական աշխատանքը նվիրված է սահմանադրական պատասխանատվության փաստական հիմք հանդիսացող սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի արարքի՝ սահմանադրական իրավախախտման ինստիտուտի վերլուծությանը: Սահմանադրական իրավախախտման օբյեկտից անհրաժեշտ է տարբերել սահմանադրական իրավախախտման առարկան: Սահմանադրական իրավախախտման առարկան կազմում են սահմանադրաիրավական հարաբերությունների օբյեկտները: Լայն առումով սահմանադրական իրավախախտման առարկա կարող ենք համարել սոցիալական կարևոր ինստիտուտներ, ինչպիսին են պետությունն ու իրավունքը: Սահմանադրական իրավախախտման առարկա կարելի է համարել նաև այն իրավական ակտերը, իրականությունում գոյություն ունեցող վիճակները, սոցիալական արժեքները, որոնց հետ սահմանադրական իրավունքի նորմերը կապում են պետական կառույցների լիազորությունները, հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունները, անհատների իրավունքներն ու ազատությունները, սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցների գործունեությունը, նրանց վարքագիծը: Սահմանադրական պատասխանատվությունն իրավական հանրույթում ընկալվում է որպես հասարակության և պետության բացասական գնահատական քաղաքացու, պետական մարմնի, պաշտոնատար անձի և այլոց գործունեությանը, ինչպես նաև պետական հարկադրանք, իրավական նորմի սանկցիայի իրացում: Կատարված

վերլուծությունների արդյունքում դիտարկվել են խնդրո առարկա հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում առկա թերությունները, բացերը, անորոշությունները և հակասությունները, որոնց վերացման, լրացման և հետագա կատարելագործման ուղղությամբ արվում են համապատասխան առաջարկություններ: Հեղինակը ներկայացրել է առանձնացված հարցերի լուծման տեսամեթոդաբանական իր տեսլականը: Օրինակների տեսքով դիտարկվել են որոշակի իրավիճակներ, որոնց շրջանակներում հիմնավորվել է, որ մինչ այժմ իրավաբանական դոկտորինում գոյություն ունեցող մոտեցումները հնարավորություն չեն տալիս բացահայտելու սահմանադրական իրավախախտման էությունը: Առաջարկվել են ներկա գործընթացներին առավել համահունչ մի շարք համակարգված տեսակետներ:

Բանալի բառեր- իրավաբանական փաստ, փաստական հիմք, սուբյեկտի սահմանադրաիրավական կարգավիճակ, հակասահմանադրական արարք, իրավախախտման սուբյեկտիվ կողմ, սահմանադրական դելիկտ, սահմանադրական պատասխանատվության բովանդակություն, սահմանադրական սանկցիա, կոլեգիալ սուբյեկտ, հանրային իշխանություն, բարձրագույն իրավաբանական ուժ:

Սահմանադրական պատասխանատվության նորմատիվ հիմքը նյութական իրավունքի նորմերն են, որոնք, սահմանելով հակաիրավական արարքի հատկանիշները, նախատեսում են նեգատիվ իրավաբանական պատասխանատվության կիրառման հիմքը: Իրավախախտումն իրավանորմի պահանջները խախտող և անբարենպաստ հետևանքներ առաջացնող վարքագծի ակտ է, իրավաբանական պատասխանատվության հիմք հանդիսացող իրավաբանական փաստ: Ըստ Վ. Ս. Ներսեսյանցի՝ իրավախախտումը դելիկտունակ սուբյեկտի ոչ իրավաչափ, հանրորեն վտանգավոր, մեղավորությամբ կատարված արարքն է (գործողությունը կամ անգործությունը), որի համար գործող իրավունքում նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն¹: Ա.Ի.Կովալենկոյի կարծիքով՝ իրավախախտումն օրենքով նախատեսված տարիքի հասած և իր արարքները կառավարելու ունակ անձի հանրորեն վտանգավոր վարքագիծն է²: Իրավախախտումը

¹ Տե՛ս **Ներսեսյանց Վ.Ս.**, «Իրավունքի և պետության տեսություն», էջ 280:

² Տե՛ս **Коваленко А. И.**, Теория государства и права, Вопросы и ответы, М., 1997, էջ 187.

սեռային հասկացություն է այնպիսի տեսակային հասկացությունների համար, ինչպիսին կարգապահական, վարչական (զանցանք), քաղաքացիական, սահմանադրական (դելիկտ), քրեական (հանցանք) և այլ իրավախախտումներն են: Հայրենական իրավահամակարգում իրավախախտումը մեկնաբանվում է որպես իրավունքի նորմի, սոցիալական շահերի և արդարության խախտում, հանրորեն վտանգավոր և սոցիալապես վնասակար վարքագիծ: Կարծում ենք՝ օրինաչափ է, որ իրավախախտումը և դրա առանձին տեսակներն ուսումնասիրում են ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ ճյուղային իրավաբանական գիտությունները: Հետազոտության մեթոդաբանական հիմք են կազմում համագործակցային, ինչպես նաև հատուկ՝ տրամաբանական, համակարգային-կառուցվածքային, համեմատական-իրավական մեթոդները:

Տարիներ շարունակ իրավախախտման և դրա «ավանդական» տեսակետների հասկացության, հատկանիշների, կազմի հիմնախնդիրները թեպետ հիմնավորված ուսումնասիրվել են, բայց անդրադարձ չի կատարվել սահմանադրական իրավախախտման հասկացությանը: Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ իրավախախտումների շարքում չի նշվել սահմանադրական իրավախախտումը³: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի զարգացմանը համընթաց՝ սահմանադրական իրավախախտումը գիտական ուսումնասիրման առարկա է դարձել:

Սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքը սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի արարքն է, որը խախտում է սահմանադրաիրավական սանկցիայով պահպանվող նորմի դիսպոզիցիան: Սահմանադրական իրավախախտում կատարած սուբյեկտի նկատմամբ կիրառվում է նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն: Սահմանադրական իրավախախտումը և սահմանադրական պատասխանատվությունը հարաբերակցվում են որպես պատճառ (իրավախախտում) և հետևանք (պատասխանատվություն): Պատճառահետևանքային կապից կարող ենք եզրահանգել, որ սահմանադրական իրավախախտումը՝ որպես իրավաբանական փաստ, սահմանադրական պատասխանատվության անհրաժեշտ հիմքն է: Մեր ընկալմամբ՝ սահմանադրական

³ Տե՛ս Теория государства и права, Под ред. **А. И. Денисова**, М., 1972, с.490-495; Общая теория государства и права, N 3, Отв. ред. **М. Н. Марченко**, М., 2002, էջ 454-462.

իրավախախտումը հակաօրինական, ավելի կոնկրետ՝ հակասահմանադրական արարք է, որը ոտնձգում է սոցիալական կարևորագույն արժեքների, հասարակական և պետական կյանքի կազմակերպման սկզբունքների դեմ: Սահմանադրական պատասխանատվության միջոցները վրա են հասնում՝ կախված արարքի բնույթից, հասարակական վտանգավորության աստիճանից, առաջացրած հետևանքներից, սուբյեկտի սահմանադրաիրավական կարգավիճակից: Հետխորհրդային ժամանակաշրջանի իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքը սահմանադրական դելիկտն է⁴: «Դելիկտ» տերմինը ծագել է լատիներեն «delictum» բառից, որը նշանակում է իրավախախտում, զանցանք: Այս տերմինն օգտագործվում է թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան գրականություններում⁵: Ըստ Վ.Օ. Լուչինի՝ «Սահմանադրական դելիկտը սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի՝ որպես սահմանադրական իրավահարաբերությունների մասնակցի արարքն է, որը չի համապատասխանում պատշաճ վարքագծի կանոններին և առաջացնում է սահմանադրական պատասխանատվություն»⁶: Կան հեղինակներ, որոնք առաջարկում են գիտական մակարդակով շրջանառության մեջ թողնել «պետական իրավախախտում» հասկացությունը⁷:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և սահմանադրական օրենսդրությունը չեն բացահայտում ոչ միայն «սահմանադրական պատասխանատվությունը», այլև «սահմանադրական իրավախախտում» հասկացությունների բովանդակությունը, հետևաբար, փորձ է արվում այն բնութագրել գիտական վերլուծությունների ճանապարհով: Այսպես, սահմանադրական իրավախախտումը մենք դիտարկում ենք լայն և նեղ ասպեկտներով: Լայն ասպեկտով սահմանադրական պատասխանատվության հիմքը բնութագրվում է որպես սուբյեկտի գործողության անհամապատասխանություն, անցանկալի վարքագծի դրսևորում, որը չի

⁴ Տե՛ս **Виноградов В. А.**, Конституционная ответственность как вид юридической ответственности // Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, Кубань, 2014, էջ 97.

⁵ Տե՛ս **Nahmof S. H., Wells M. L., Taton T. A.**, Constitutional Torts. Anderson Publishing company, 1995.

⁶ Տե՛ս **Лучин В. О.**, Конституционные деликты // Государство и право, 2000, N 1, էջ 12.

⁷ Տե՛ս **Карасев М. Н.**, О государственно-правовой ответственности высших должностных лиц субъектов Российской Федерации // Журнал российского права, 2000, N7, էջ 32.

հանգում սպասված արդյունքի⁸: Սահմանադրական պատասխանատվության հիմք չպետք է համարել անհամապատասխանությունը «բարձր շահին» կամ աննպատակահարմարությանը, քանի որ վերջիններս հստակ իրավական ձևակերպում և ամրագրում չունեն, հայեցողական հասկացություններ են, որոնք սահմանադրաիրավական որակման համար կողմնորոշիչ չեն կարող դառնալ: Մենք համակարծիք ենք Վ. Օ. Լուչինի տեսակետին՝ ըստ որի հստակությունը և ամբողջականությունը բնորոշ չեն սահմանադրական դեղիկտներին⁹: Կարևոր մի դիտարկում անենք. սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցների վարքագիծը կանխորոշվում և գնահատվում է ոչ միայն իրավական նորմերով, այլ նաև երբեմն պայմանավորված է քաղաքական կողմնորոշումներով ու չափանիշներով: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ անթույլատրելի է «սահմանադրական իրավախախտում» հասկացության տարաբնույթ սահմանումների՝ արժեքային անորոշ հասկացությունների օգտագործումը: Մյուս կողմից՝ չպետք է սահմանափակել վերջինիս իմաստային բովանդակությունը՝ այն հանգեցնելով միայն «Սահմանադրության էական խախտման, որը կատարվել է մեղավորությամբ դեղիկտունակ անձի կողմից, որն ունի հանրային վտանգավորություն, պատճառել է էական վնաս»¹⁰, կամ էլ միայն սահմանել, որ «սահմանադրական իրավախախտումը Սահմանադրության նորմերի դիտավորյալ խախտումն է»¹¹: Նշված մոտեցմանը համամիտ չենք, քանի որ սահմանադրական իրավախախտումը միայն Սահմանադրության խախտումը չէ: Կարող են խախտվել նաև սահմանադրական իրավունքի այլ աղբյուրների պահանջները, և խախտումը կարող է կատարվել ոչ դիտավորությամբ:

Այս առումով՝ Դ. Տ. Շոնն առաջարկում է ընդլայնել սահմանադրական պատասխանատվության առաջացման հիմքերի շրջանակը՝ ներառելով նաև քրեական օրենսգրքի նորմերի խախտումները, անբարոյական վարքագիծը և այլն¹²: Այս տեսակետին մենք այնքան էլ համամիտ չենք: Ինչպես նշվեց, սահմանադրական

⁸ Տե՛ս **Авакьян С.А.**, Государственно-правовая ответственность// Советское государство и право, М., 1975, էջ 22.

⁹ Տե՛ս **Лучин В. О.**, Ответственность в механизме реализации Конституции// Право и жизнь, 1992, էջ 39.

¹⁰ Տե՛ս **Скифский Ф. С.**, Ответственность за конституционные правонарушения, Тюмень, 1998, էջ 12.

¹¹ Տե՛ս **Витрук Н. В.**, Конституционная ответственность: вопросы теории и практики// Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, էջ 37.

¹² Տե՛ս **Шон Д. Т.**, Конституционная ответственность// Государство и право, 1995, N7.

պատասխանատվության հիմքը սահմանադրական դեյիկտն է, որն էականորեն տարբերվում է ոչ միայն քրեական պատասխանատվության հիմք հանդիսացող հանցանքից, այլև վարչական, քաղաքացիական, կարգապահական իրավախախտումներից: Միաժամանակ ավելացնենք նաև, որ սահմանադրական պատասխանատվության հիմք կարող է լինել ոչ միայն սահմանադրական նորմեր խախտող վարքագիծը, այլև սահմանադրական իրավանորմերով սահմանված տարբեր հանգամանքների առաջացումը, օրինակ՝ այլ սուբյեկտների գործողությունները¹³:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան երկրներ, որոնց օրենսդրությամբ պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության հիմք է համարվում անվայել, անբարո վարքագիծը (օրինակ՝ Մադագասկարի Հանրապետության Սահմանադրության 43-րդ հոդված)¹⁴:

Մեր կարծիքով՝ պաշտոնատար անձանց իրավախախտումները նաև անբարոյական արարքներ են: Կարևոր մի փաստ ևս արձանագրենք. պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած սուբյեկտ կարող է ցուցաբերել անբարո վարքագիծ, որը կարող է չորակվել որպես իրավախախտում, բայց տվյալ սուբյեկտի նկատմամբ կհանգեցնի վստահության կորստին, և չի բացառվում նաև, տվյալ սուբյեկտի հետագա պաշտոնավարման դադարեցման հիմք հանդիսանա:

ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Սահմանադրությամբ (18-րդ հոդված 1-ին մաս) ամրագրված է, որ պաշտոնատար անձինք պետք է համապատասխանեն «պատվախնդրության, արդարության, ազնվության, զսպվածության, բարոյականության, աշխատասիրության և օգտակարության պահանջներին»¹⁵: Բարոյական արժեքներն են դրված օրենսդրական համակարգի հիմքում, և բարոյական ու իրավական նորմերի պահպանության շնորհիվ է կառուցվում սահմանադրական օրինականությունը: Ասվածից չի հետևում, որ սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքն անբարոյական արարքն է: Սահմանադրական պատասխանատվության հիմքի առանձնահատկությունն այն է, որ

¹³ Տե՛ս **Виноградов В.А.**, Ответственность в механизме охраны конституционного строя, М., 2005, էջ 30:

¹⁴ Տե՛ս **Чиркин В. Е.**, Конституционное право зарубежных стран, М., 2001, էջ 312:

¹⁵ Տե՛ս Соединенные Штаты Америки: Конституция и законодательные акты, М., 1993:

օրենսդրական մակարդակով բացակայում են սահմանադրական իրավախախտումների հստակ ձևակերպումները¹⁶:

Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի հստակեցումը դժվարանում է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որպես սահմանադրական պատասխանատվության հիմք կարող է համարվել ոչ միայն սահմանադրական, այլև իրավունքի այլ ճյուղերին պատկանող իրավանորմերի խախտումը (օրինակ՝ Հանրապետության վարչապետի կողմից պետական դավաճանության կամ այլ հանցանքի կատարումը): Բերված օրինակում վրա է հասնում սահմանադրաիրավական սանկցիան՝ պաշտոնազրկումը, որին հաջորդում է քրեական պատասխանատվությունը:

Ասվածից կարող ենք եզրակացնել, որ սահմանադրական պատասխանատվության հիմք կարող են լինել ինչպես սահմանադրական, այնպես էլ այլ իրավախախտումները: Սահմանադրական պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվության այլ միջոցների հետ համատեղ: Սահմանադրական պատասխանատվությունը մի դեպքում կարող է նախորդել պատասխանատվության մյուս տեսակներին (քրեական, վարչական), իսկ այլ դեպքերում կիրառվել իրավունքի այլ ճյուղերով սահմանված ներգործության միջոցների գործադրումից հետո: Վերոգրյալի օրինակ կարող է լինել Ազգային ժողովի պատգամավորի ձերբակալումը, որից հետո օրենսդիրը նրան զրկում է պատգամավորական անձեռնմխելիությունից: Սահմանադրական պատասխանատվության հիմք կարող են լինել ոչ միայն գործողությունները, այլև անգործությունը, սահմանադրական պարտավորությունների չկատարումը: Դ. Տ. Շոնի կարծիքով՝ սահմանադրական պատասխանատվության հիմքն այն գործողությունը կամ անգործությունն է, որը վնաս է պատճառել կամ կարող էր պատճառել ժողովրդին, պետությանը՝ անկախ այն հանգամանքից, թե դրանով խախտվե՞լ են սահմանադրական իրավանորմերը, թե՛ ոչ¹⁷:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ հակասահմանադրական վարքագիծը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

¹⁶ Տե՛ս **Лучин В. О.** նշվ. աշխ., էջ 39:

¹⁷ Տե՛ս **Шон Д.Т** Конституционно-правовая ответственность и юридические преимущества, Пенза, 2016, էջ 49-50:

1. սահմանադրաիրավական նորմի չկիրառում,
2. սահմանադրաիրավական նորմի ոչ պատշաճ կիրառում,
3. սահմանադրաիրավական նորմի ուղղակի խախտում¹⁸:

Վերը թվարկվածներին մենք կավելացնեինք նաև, որ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև սահմանադրական իրավունքի սուբյեկտների կողմից իրենց սահմանադրական իրավունքների չարաշահմամբ: Մեր կարծիքով՝ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմին գնահատական կարող է տալ այն սուբյեկտը, որն իրավասու է կիրառել սահմանադրաիրավական սանկցիա, կամ ում որոշումը վճռորոշ է սահմանադրական պատասխանատվության ենթարկելու գործընթացում:

Սահմանադրական պատասխանատվությունը նշանակում է պետության և հասարակության բացասական գնահատական քաղաքացու, պետական մարմնի, պաշտոնատար անձի, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլոց գործունեությանը, ինչպես նաև պետական հարկադրանք, իրավական նորմի սանկցիայի իրացում¹⁹: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը սուբյեկտի կողմից իր սահմանադրական պարտականությունները չկատարելն է կամ ոչ պատշաճ կատարելը: Իշխանական կառույցների սահմանադրական պարտականությունը նրանց ներկայացվող իրավական կարգադրագիրն է՝ ձեռք բերելու պոզիտիվ արդյունք՝ իր լիազորություններին համապատասխան²⁰: Այլ հեղինակների կարծիքով՝ սահմանադրական դեյիկտի օբյեկտիվ կողմը դրսևորվում է սահմանադրական արգելքների ուղղակի խախտման ձևով: Չնայած սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմի բնորոշման բարդությունը պայմանավորված է սահմանադրական իրավանորմերը խախտած սուբյեկտների վարքագծի գնահատման հստակ, միանշանակ կամ համընդհանուր, բոլոր դեպքերի համար ընդունելի չափանիշների բացակայությամբ և այդպիսի չափանիշների սահմանման դժվարությամբ, բայց կարող ենք փաստել, որ

¹⁸ Տե՛ս **Авакьян С.А.**, Государственно-правовая ответственность// Советское государство и право, М., 1975, էջ 22:

¹⁹ Տե՛ս **Боброва Н.А., Зражевская Т.Д.**, Նշվ. աշխ., էջ 66:

²⁰ Տե՛ս **Габричидзе Б.Н., Чернявский А.Г.**, Նշվ.աշխ., էջ 260:

սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը կազմում է սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցների գործունեությունը (գործողությունը կամ անգործությունը), որը խախտում է Սահմանադրության գերակայության, բարձրագույն իրավաբանական ուժի, ուղղակի, անմիջական գործողության և մյուս սկզբունքները՝ կապված հանրային իշխանության իրացման հետ:

Որպես կանոն, սահմանադրական նորմի խախտումը ձևական կազմ ունի, այսինքն՝ չի պահանջվում նյութական հետևանքների առկայություն: Դա պայմանավորված է սահմանադրական իրավախախտման ակնհայտության և հասարակական մեծ հնչեղության հետ: Բայց եթե պատճառվում է վնաս, ապա, ինչպես վերը նշեցինք, սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը նյութական բնույթ է ստանում և ներառում է նաև սուբյեկտի վարքագծի ու հետևանքի՝ առաջացրած վնասի միջև պատճառահետևանքային կապը:

Իրավախախտման սուբյեկտիվ կողմը կազմում են մեղքը, նպատակները, շարժառիթները: Սահմանադրական իրավախախտումների մեծ մասը կարող է կատարվել թե՛ դիտավորյալ և թե՛ անզգույշ մեղքով: Երդում տալուց իր սահմանադրական պարտականությունները կատարելուց հրաժարվելը կարող է կատարվել միայն դիտավորությամբ: Իրավաբանական գրականության մեջ առկա է այն կարծիքը, ըստ որի՝ սահմանադրական իրավունքում մեղքը չպետք է դիտարկել միայն դրա հոգեբանական ձևերի՝ դիտավորության կամ անզգույշության կատեգորիաների միջոցով: Առաջարկվում է մեղքը որոշելիս կարևորել սոցիալ-քաղաքական այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են քաղաքական համոզմունքները, գործի շահերը և այլն²¹:

Վ. Օ. Լուչինի կարծիքով՝ թույլատրելի է պատասխանատվությունն օբյեկտիվորեն հակաիրավական արարքի համար, այսինքն՝ առանց իրավախախտման սուբյեկտի մեղքը հաստատելու²²: Նույն կարծիքն ունի նաև Տ. Դ. Զրաժևսկայան²³:

Իրավաբան-գիտնականների կարծիքը տարբերվում է այն հարցում, թե արդյո՞ք մեղքը համարել որպես սահմանադրական պատասխանատվության կիրառման պարտադիր պայման, թե՞ ոչ: Մի մասը կարծում է, որ առանց մեղքի չպետք է լինի

²¹ Տե՛ս **Малиновская В.М.**, Նշվ. աշխ., էջ 18:

²² Տե՛ս **Лучин В.О.**, Նշվ. աշխ., էջ 14:

²³ Տե՛ս **Зражевская Т. Д.**, Из выступления на "Круглом столе" журнала "Государство и право" // Государство и право, 2000, N 3:

պատասխանատվություն, և պատասխանատվությունն անհնար է պատկերացնել առանց մեղավոր անձի կամ մարմնի համար անբարենպաստ հետևանքների առաջացման: Իսկ անօրինական ակտերի վերացումը նրանք համարում են օրինականության վերականգնում և ոչ թե սահմանադրական պատասխանատվության կիրառում²⁴: Գիտնականների մյուս մասը, համարելով մեղքը որպես իրավաբանական պատասխանատվության հիմքի պարտադիր տարր, կոլեգիալ սուբյեկտի ընդունած իրավական ակտի վերացումը սահմանադրական պատասխանատվության միջոց է համարում, նույնիսկ եթե չի հաստատվում կոնկրետ անձանց մեղքը, և ակտն ընդունած անձանց ու մարմնի համար չեն առաջանում անբարենպաստ հետևանքներ: Այս միջոցը համարվում է սահմանադրական սանկցիա, քանի որ ակնհայտ է նրանց գործունեության պետաիրավական բացասական գնահատականը, ովքեր ընդունել են այդ ակտը: Կարծում ենք, որ իրավական ակտի վերացումը և՛ սահմանադրաիրավական սանկցիայի տեսակ է, և՛ ինքնին անբավարար գնահատում է բովանդակում: Սահմանադրական իրավահարաբերություններում մեղքի հիմնահարցը բազմակողմանի և հիմնավորված ուսումնասիրման կարիք ունի:

Սահմանադրական պատասխանատվության բովանդակությունը, իրավաբանական բնույթը և հիմքերն առանձնահատուկ են, ուստի դրանց նկատմամբ չի կարելի կիրառել իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի համար ավանդական հասկացությունները, սկզբունքները և մոտեցումները: Մենք համակարծիք չենք այն գիտնականների հետ, որոնք մեղքի առկայությունը համարում են սահմանադրական պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման²⁵: Պետք է հաշվի առնել, որ առանց մեղքի պատասխանատվությունը հնարավոր է ոչ միայն սահմանադրական իրավահարաբերություններում. «անմեղ պատասխանատվությունը» սկզբունքորեն հնարավոր է նաև քաղաքացիաիրավական ոլորտում: Քաղաքացիական օրենսդրությունը փաստում է, որ առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտն էականորեն ընդլայնվել է, օրինակ, բարոյական վնասը փոխհատուցելու,

²⁴ Տե՛ս **Красбов М.А.**, Публично-правовая ответственность представительных органов за нарушение закона// Государство и право, 1993, N 6, էջ 50: **Савин В. Н.**, Ответственность государственной власти перед обществом// Государство и право, 2000, N 12, էջ 67:

²⁵ Տե՛ս **Бугусова Н. В.**, Конституционно-правовой статус российского государства: вопросы теории и практики, Москва, 2006, էջ 131:

ձեռնարկատիրական գործունեությունից բխող պարտականությունները կատարելու և այլ դեպքերում: Առանց մեղքի պատասխանատվությունը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1061 հոդվածի առաջին մասում, իսկ ըստ 1062 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը կրում է քաղաքացիաիրավական պատասխանատվություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց պատճառած վնասի դեպքում²⁶:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ սահմանադրական դեիկտների առնչությամբ մեղքի առկայությունը պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման է, թեև մեղքն այս դեպքում ոչ միշտ է համապատասխանում իր ավանդական ձևին²⁷: Սահմանադրական իրավախախտման սուբյեկտիվ կողմի առանձնացման փորձերը գրեթե միշտ դատապարտված են անհաջողության, քանի որ իրավախախտման կազմի հարյուրամյակներով մշակված կառուցվածքը սահմանադրական իրավունքում դառնում է անկենսունակ: Առանց մեղքի պատասխանատվության պաշտպանության օգտին բերվում է երեք հիմնական փաստարկ. առաջին՝ այդ պատասխանատվությունն ունի խթանող բնույթ, երկրորդ՝ պայմանավորված է տուժողի գույքային շահերի ապահովման անհրաժեշտությամբ և երրորդ՝ օրենքի տերմինաբանությամբ՝ համաձայն որի պատահականորեն պատճառված վնասը փոխհատուցելու պարտականությունը կոչվել է պատասխանատվություն²⁸: Մեր կարծիքով՝ սահմանադրական պատասխանատվությունը կարող է կիրառվել ինչպես իրավախախտման և նրա սուբյեկտիվ կողմի առանցքը կազմող մեղքի առկայության, այնպես էլ մեղքի ձևական բացակայության դեպքում: Սահմանադրական պատասխանատվության առանձնահատկությունն է պատասխանատվության հնարավորությունն առանց մեղքի: Առանց մեղքի պատասխանատվություն է պառլամենտական պատասխանատվությունը (նման իրավիճակ կարող է առաջանալ բացառապես խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում) կամ առանց մեղքի (այսինքն՝ իրավաբանական իմաստով մեղքի բացակայությամբ) պատասխանատվություն է

²⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը:

²⁷ Նման տեսակետ է արտահայտել նաև Տ. Դ. Զրաժևսկայան, տե՛ս Государство и право, 2000, N 3, էջ 26-28:

²⁸ Տե՛ս Маленин Н.С., Правонарушение: понятие, причины, ответственность, М., 1985, էջ 28-29, 155.

պատգամավորի հետկանչը²⁹: Առանց մեղքի պատասխանատվության կիրառումը հիմնավորվել է 20-րդ դարի 50-ական թվականներից և հիմնականում վերագրվել է քաղաքացիական իրավունքին³⁰: Կան երկրներ, որտեղ սահմանադրորեն նախատեսվում է սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի մեղքը: Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ դաշնային սահմանադրական դատարանը կարող է դաշնային նախագահին պաշտոնանկ անել, եթե նա մեղավոր է հիմնական օրենքի կամ այլ օրենքի դիտավորյալ խախտման մեջ: Նման կարգավորումներ են նախատեսված նաև Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածով, Հունգարիայի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով, Հունաստանի Սահմանադրության 49-րդ հոդվածով³¹:

Սահմանադրական իրավահարաբերություններում մեղքը կարելի է համարել սուբյեկտի՝ սահմանադրական պարտականությունների պատշաճ կատարման հնարավորություն և նրա կողմից անհրաժեշտ բոլոր միջոցների չձեռնարկում՝ սահմանադրական իրավախախտում թույլ չտալու համար: Սահմանադրությունը՝ որպես բոլորի գործունեության համար «սահմաններ գծող» պատվիրանների ամբողջություն, բոլորի համար պարտադիր է: Սահմանադրությանը չենթարկվելը, անկախ այն հանգամանքից, թե խախտողն ով է, իրավախախտում է: Սահմանադրական իրավախախտումը սուբյեկտի սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքն է: Սահմանադրությանը ենթարկվելը կկանխի սահմանադրական իրավախախտումները, կամրապնդի սահմանադրական կարգն ու օրինականությունը և ամբողջությամբ կյանքի կկոչի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածը: Իրավական կյանքի բնականոն կենսագործման գործում առանցքային դեր ունի ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը, որն իր արտացոլումն է ունենում հասարակական կարծիքում: Իրավակազմավորման գործընթացում, պետության օրենսդրական գործունեության մեջ էական նշանակություն ունեն օրինագծերի կամ

²⁹ Տե՛ս **Боброва Н. А.** Конституционная ответственность как элемент конституционного строя// Закон и право, 2003, N 9, էջ 28:

³⁰ Տե՛ս **Автимонов Б. С.** Гражданская ответственность за вред, причиненный источником повышенной опасности, М., 1952:

³¹ Տե՛ս Конституции государств Европы, М., 2001:

կոնկրետ իրավաբանական դրույթների զանգվածային քննարկումները: Ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը հատկապես կարևորվում է հանրաքվեների ժամանակ: Բնակչության իրավագիտակցության բարձր մակարդակն իրավական նորմի ճիշտ իրացման անփոխարինելի պայմանն է, պարտականությունների հստակ կատարման և իրավունքների իրավաչափ օգտագործման երաշխիքը: Մեր կարծիքով՝ իրավունքի իրացման երկու գործոն պետք է կյանքի կոչվեն. առաջինն իրավագիտակցության բարձր մակարդակն է, երկրորդը՝ պետական հարկադրանքի սպառնալիքը: Անհատի իրավագիտակցության ցածր մակարդակը կարող է հանգեցնել ոչ իրավաչափ գործողությունների կատարման, և, ընդհակառակը, անհատական իրավագիտակցության բարձր մակարդակը խթան, իրավական շարժառիթ է ծառայում իրավաչափ վարքագծի համար:

Օրենքները կարող են երևան գալ միայն հասարակության բավականաչափ զարգացած կյանքի, հասարակության մեջ զարգացած բազմատեսակ պահանջմունքների և համապատասխան բավարարման պայմաններում: Քանի որ օրենքի հետ կապված են գիտելիքը և միտքը, դրա երևան գալու համար անհրաժեշտ է նաև մշակութային զարգացման և կրթվածության որոշակի մակարդակ, որպեսզի այն չմնա միայն զգայականում, այլ կարողանա օգտվել համընդհանուր մակարդակից: Եվ վերջապես, պատասխանատվության հիմնահարցերը համակարգային բնույթ ունեն, և յուրաքանչյուր հիմնահարցի լուծումը հանգեցնելու է նոր հիմնահարցերի առաջադրմանը: Ընդ որում՝ որքան ավելի շատ նոր հիմնահարցեր են առաջանում, այնքան ավելի ինֆորմատիվ, արդյունավետ են համարվում լուծված հիմնահարցերը:

НАРУШЕНИЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ НОРМЫ КАК ФАКТИЧЕСКОЕ ОСНОВАНИЕ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Арутюнян Герберт

Соискатель кафедры конституционного права ЕГУ

Аннотация: Данная исследовательская работа посвящена анализу деяния субъекта конституционных правоотношений, являющегося фактической основой конституционной ответственности, института конституционного правонарушения. Необходимо отличать объект конституционного правонарушения от объекта конституционного правонарушения. Объектом конституционного правонарушения являются объекты конституционно-правовых отношений. В широком смысле субъектом конституционного правонарушения можно считать такие важные социальные институты, как государство и право. Правовые акты, ситуации, существующие в действительности, социальные ценности, с которыми нормы конституционного права связывают полномочия государственных органов, полномочия органов государственной власти и должностных лиц, права и свободы личности, деятельность участников конституционно-правовых отношений, и их поведение также может рассматриваться как предмет конституционного нарушения. Конституционная ответственность в юридическом сообществе воспринимается как негативная оценка обществом и государством деятельности гражданина, государственного органа, должностного лица и других лиц, а также государственное принуждение, реализация санкции правовой нормы, неясности и противоречия, по устранению, дополнению и дальнейшему совершенствованию которых даны соответствующие рекомендации. Автор представил свое видео-методическое видение решения отдельных вопросов. В виде примеров были рассмотрены отдельные правовые ситуации, в рамках которых обосновано, что существующие в правовой доктрине подходы до сих пор не дают возможности раскрыть природу конституционного правонарушения. Был предложен ряд систематических взглядов, которые наиболее соответствуют текущим процессам.

Ключевые слова- юридический факт; фактическая основа; конституционный статус субъекта; неконституционный акт; субъективная сторона правонарушения; конституционный деликт; содержание конституционной ответственности; конституционная санкция; коллегиальное образование; публичная власть; высшая юридическая власть.

VIOLATION OF THE CONSTITUTIONAL LEGAL NORM AS A FACTUAL BASIS OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY

Harutyunyan Herbert

PhD student at the YSU Chair of Constitutional Law

Summary: This research work is dedicated to the analysis of the act of the subject of constitutional legal relations, which is the factual basis of constitutional responsibility, the institution of constitutional offense. It is necessary to distinguish the object of the constitutional offense from the object of the constitutional offense. The object of a constitutional offense is the objects of constitutional and legal relations. In a broad sense, we can consider such important social institutions as the state and law to be the subject of a constitutional offense. Legal acts, situations existing in reality, social values, with which the norms of constitutional law connect the powers of state structures, the powers of public authorities and officials, the rights and freedoms of individuals, the activities of the participants in constitutional and legal relations, and their behavior can also be considered as the subject of a constitutional violation. Constitutional responsibility in the legal community is perceived as a negative assessment of society and the state on the activity of a citizen, state body, official and others, as well as state coercion, realization of the sanction of a legal norm. As a result of the analysis, the shortcomings, gaps, uncertainties and contradictions in the legal acts regulating the relations in question were highlighted, and appropriate recommendations are made for their elimination, completion and further improvement. The author presented his video-methodological vision for the solution of individual issues. In the form of examples, certain legal situations were considered, within the framework of which it was justified that the approaches existing in the legal doctrine so far do not provide an opportunity to reveal the nature of the constitutional offense. A number of systematic views have been proposed that are most consistent with current processes.

Key words- legal fact; factual basis; constitutional status of the subject; unconstitutional act; subjective aspect of the offense; constitutional tort; content of constitutional responsibility; constitutional sanction; collegial entity; public authority; supreme legal power.

Հողվածը գրախոսվել է՝ 02. 12. 2024թ.
Ներկայացվել է Կրթագրության՝ 20.12.2024թ.